

“ՀԱԲԻԹԱԹ ՖՈՐ ՀՅՈՒՄԵՆԻԹԻ ԱՐՄԵՆԻԱ” ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐ

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

2000 թվականից ի վեր Հաբիթաթ Արմենիան ավելի քան 6,000 ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների օգնել է բարելավելու իրենց բնակարանային պայմանները:

Հաբիթաթ Արմենիան՝ համագործակցելով ֆինանսական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, համատիրությունների և բազմաբնակարան շենքերի բնակիչների հետ՝ իրականացնում է էներգախնայողության ծրագրեր բազմաբնակարան շենքերում:

«Հարիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա»-ի կողմից իրականացվող Էներգաարդյունավետության բարելավման ծրագրեր

1. *Վերականգնվող էներգիայի ֆինանսավորում*
2. *Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում՝ ներառյալ էներգաարդյունավետության բարձրացում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին*
3. *Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում*

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Նպատակը. Խթանել արևային էներգիայի կիրառումը ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների կողմից՝ նրանց հնարավորությունն ընձեռնելով ունենալ մատչելի տաք ջուր և էլեկտրաէներգիա:

Ծրագրի տևողությունը՝ օգոստոս, 2016թ. – փետրվար, 2022թ.

Ներդրված կապիտալ՝ ընդհանուր \$323,000, որից \$230,000-ը՝ Հաբիթաթ Արմենիայի ֆինանսավորում և \$93,000 -ը՝ «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի համաֆինանսավորում

Առ այսօր՝ տրամադրվել է 145 վարկ արևային ջրատաքացուցիչ և արևային վահանակ ձեռք բերելու նպատակով:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի խնդիրները

- Բարելավել Հայաստանում բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանն ուղղված ներդրումային դաշտը
- Մեղմել էներգակիրների թանկացման ազդեցությունը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար
- Բարելավել Հայաստանում բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները
- Մշակել և փորձարկել կենսունակ ֆինանսական մոդել(ներ)
- Նպաստել համատիրությունների կարողությունների զարգացմանը:

Օժանդակող հանգամանքները

- Քաղաքապետարանների կողմից տրամադրվող սուբսիդավորում
- Համատիրությունների շահագրգռվածությունը շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները բարեկարգելու հարցում

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Գործընկերները

Քաղաքապետարաններ

- Համագործակցություն Երևանի և Վանաձորի քաղաքապետարանների հետ. մինչև 40% սուբսիդավորում
- Իրականացված աշխատանքներ **42 շենքում**, որից՝ **30-ը** իրականացվել են ԲԲՇ ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման ծրագրով (Երևանում՝ 27, Վանաձորում՝ 3) **12-ը՝ ԲԲՇԷԱԲ** ծրագրի շրջանակում՝ Երևանում
- Ընդհանուր 104.5 մլն. դրամի ներդրում, որից շուրջ 35 մլն դրամը՝ սուբսիդիա քաղաքապետարանից
- Հաբիթաթ Արմենիայի կողմից Ինեկոբանկին տրամադրված 50 մլն. դրամ փոխառություն

Ֆինանսական հաստատություններ

- Համագործակցություն Ինեկոբանկ ՓԲԸ հետ՝ սկսած 2012թ.-ից
- Շուրջ 56.5 մլն. դրամի վարկային միջոցների ներդրում

Համատիրություններ

- Աշխատանք բնակիչների հետ
- Աշխատանք բանկի հետ
- Շուրջ 13 մլն. դրամի ներդրում

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Վարկավորման պայմաններ

- Առնվազն 70% հավաքագրում
- Բնակիչների առնվազն 75%-ի համաձայնությունը մասնակցելու և տրամադրելու անձնական երաշխավորություններ
- Գրավ/երաշխավորություն
- Համատիրության և բնակիչների վարկունակությունը ընդունելի լինելը բանկի համար
- Եկամտի այլ աղբյուրների առկայությունը (ալեհավաքներ, գովազդային վահանակներ, այլն) ցանկալի է

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Առ այսօր իրականացվել են

- Համատիրությունների ինստիտուցիոնալ կարողությունների ուսումնասիրություն
- Էներգաաուդիտի իրականացում 3 տիպային շենքերում
- Ֆինանսական մոդելի մշակում
- Էներգաարդյունավետության բարելավման շինաշխատանքներ 12 ԲԲՇ-ում
- Համագործակցություն Ինեկոբանկ ՓԲԸ-ի հետ՝ 200,000 ԱՄՆ դոլլար
- Վեբկայքի գործարկում՝ www.taqtun.am

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

Ծրագրի ֆինանսավորումը՝
Եվրոպական միությունն՝ 1,350,000 Եվրո

Ծրագրի համաֆինանսավորումը՝
Սպիտակի քաղաքապետարան՝ 192,375 Եվրո
Վայքի քաղաքապետարան՝ 145,125 Եվրո

Ծրագրի տևողությունը՝ 4 տարի (2014-2018)

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ
(ՎԱԷՀՔ)

Ծրագրի նպատակը

*Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին
աջակցել մշակելու և փորձարկելու էներգիայի
խնայողության արդյունավետ ու կիրառելի մոդելներ
ԲԲՇ-երում և հանրային շենքերում ԷԱ
միջոցառումների իրականացմամբ և վերականգնվող
էներգիայի աղբյուրների կիրառմամբ*

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

Ծրագրի շահառուները

*45 բազմաբնակարան շենքի 2,450 բնակիչ
(Սպիտակում՝ 750, Վայքում՝ 1,700),*

Սպիտակի մանկապարտեզի 200 երեխա, 40 աշխատակից,

Վայքի մշակույթի տան 580 երեխա, 40 աշխատակից

Սպիտակի եվ Վայքի քաղաքապետարանների 20 աշխատակից

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

Ծրագրի ազդեցությունը

Սպիտակ և Վայք քաղաքներում ԷԱ բարձրացման
շնորհիվ տարեկան 600 տոննա CO₂ ածխաթթու գազի
արտանետումների նվազեցում, որը կազմում է երկու
քաղաքներում թիրախային շենքերի CO₂
արտանետումների 20%-ը

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

Ակնկալվող արդյունքներ

1. *Ընտրված 45 բնակելի և 2 հանրային շենքերում՝ տարեկան 15-30% էներգախնայողություն*
2. *Ընտրված բնակելի շենքերի բնակիչների շրջանում էներգաարդյունավետության կարևորության մասին իրազեկվածության աճ և էներգիայի խնայողության վարքագծի դրական փոփոխություն*
3. *Սպիտակի և Վայքի քաղաքապետարանների կայուն էներգետիկ ծրագրեր իրականացնելու կարողություն*
4. *Սպիտակ և Վայք քաղաքների էներգիայի ընդհանուր ծախսերում վերականգնվող էներգիայի չափաբաժնի աճ*

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

Առ այսօր իրականացվել են.

- 52 ԲԲ շենքերի տեխնիկական վիճակի հետազննում
- 5 բազմաբնակարան և 2 հանրային շենքերի էներգետիկ աուդիտ
- 23 ԲԲՇ-ում իրականացվել են (Սպիտակում՝ 13, Վայքում՝ 10) էներգաարդյունավետության բարելավման միջոցառումներ (տանիքի ծածկի վերանորոգում, ձեղնահարկի հատակի ջերմամեկուսացում, մուտքի դռների և աստիճանահարթակների պատուհանների փոխում)
- Իրականացվել են ԷԱ բարելավման միջոցառումներ Վայքի մշակույթի տան գրադարանում և Սպիտակի թիվ 2 մանկապարտեզում
- Մշակվում է համայնքային էներգաարդյունավետության ֆոնդի հայեցակարգը, կանոնադրությունը և գործունեության ձեռնարկը

Առաջիկայում նախատեսվող գործողություններ.

- 16 ԲԲՇ-ի ԷԱ բարելավման միջոցառումներ (Սպիտակում՝ 14, Վայքում՝ 2), այդ թվում 4 շենքի արտաքին պատերի ջերմամեկուսացում
- Արևային 5 ֆոտովոլտայիկ համալկարգերի տեղադրում Սպիտակի և Վայքի 8 հանրային սպառողների համար 86.4կվտ ընդհանուր դրվածքային հզորությամբ

Սպիտակի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և ջերմոցային գազերի արտանետման նվազման ծավալները

Վայրը	Էներգախնայողու թյուն	CO ₂ -ի տարեկան արտանետումների նվազում
	մվտ/տարի	տոննա /տարի
Սպիտակ, 1-ին փուլ, 4 շենք (ավարտված է)	109.302	29.118
Սպիտակ, 2-րդ փուլ, 9 շենք (ավարտված է)	232.278	61.879
Սպիտակ, 3-րդ փուլ, 10 շենք (սպասվող)	266.026	70.869
Սպիտակ, Ավետիսյան 17 (սպասվող)	560.665	137.90
Սպիտակ, Ավետիսյան 15/1 (նախագծում)	43.748	10.223
Սպիտակ, Ավետիսյան 15/2 (նախագծում)	40.357	8.755
Սպիտակ, Ավետիսյան 17/1 (նախագծում)	37.043	8.391
Սպիտակ, Ավետիսյան 17/2 (նախագծում)	42.952	9.421
Սպիտակ, թիվ 2 մանկապարտեզ (ավարտ)	2.998	1.331
Ընդամենը Սպիտակում	1,335.369	337.887

Վայքի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և ջերմոցային գազերի արտանետման նվազման ծավալները

Վայրը	Էներգախնայողություն	CO ₂ -ի տարեկան արտանետումների նվազում
	Մվտ/տարի	Տոննա/տարի
<i>Վայք, 1-ին փուլ, 5 շենք (ավարտված է)</i>	313.517	83.521
<i>Վայք, 2-րդ փուլ, 5 շենք (ավարտված է)</i>	280.076	74.612
<i>Վայք, 3-րդ փուլ, 2 շենք (սպասվող)</i>	94.611	25.204
<i>Վայք, Մշակույթի տան գրադարան (ավարտված)</i>	45.92	20.388
Ընդամենը Վայքում	734.124	203.725

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

Համայնքային էներգաարդյունավետության ֆոնդ (ԷԷՖ)

ԷԷՖ ֆինանսական հոսքերի համալրման աղբյուրները.

- *ԲԲ շենքերում իրականացված էներգաարդյունավետության միջոցառումների համար կատարված ծախսերի փոխհատուցումը բնակիչների կողմից՝ ամսավճարների կամ միանվագ վճարների տեսքով*
- *Համայնքում փողոցային լուսավորության արդիականացման արդյունքում ստացված խնայողությունները*
- *Հանրային սպառողների կողմից վերականգնվող (արևային) էներգիայի օգտագործման արդյունքում ստացված խնայողությունները*



ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՔ ԵՎ ՄՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (ՎԱԷՀՔ)

ԲԲՇ ծրագրերի իրականացման խոչընդոտները

- ԲԲՇ կառավարման կառույցների բացակայությունը կամ ոչ կայացած լինելը
- Բնակիչների թերահավատությունը և ծրագրին մասնակցելու պատրաստակամության պակասը, “Փակ դռների” առկայությունը
- Պարտադիր նորմերով սահմանված վճարների հավաքագրման ցածր տոկոսը
- Համատիրությունների, ինչպես նաև բնակիչների ցածր իրազեկվածությունը բնակելի շենքերի էներգաարդյունավետության միջոցառումների վերաբերյալ
- Շենքերի տեխնիկական վիճակի հետազաննման և վթարայնության աստիճանի գնահատման բացակայությունը
- Քաղաքապետարանների բյուջեից էներգախնայողության միջոցառումների համար սուղ հատկացումները
- Վարկավորման երկարատև ընթացակարգը
- Գրավի բացակայություն, բնակիչների անհատական երաշխավորություններով պայմանագրերի կնքման անհրաժեշտություն



ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Իրականացված աշխատանքներ




ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Իրականացված աշխատանքներ



Ավան փարչական շրջան, Թուվանյան թաղ. 6/1







Հնորհակալություն